

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգատ թիվ 8088/05)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

10 ապրիլ 2012

ՎԵՐՋՆԱԿԱՆ Է
10/07/2012

Սույն վճիռը վերջնական է դաձել Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ բաժանմունք) Պալատը, հետևյալ կազմով՝

Josep Casadevall, *Նախագահ,*
Corneliu Bîrsan,
Alvina Gyulumyan,
Egbert Myjer,
Ineta Ziemele,
Luis López Guerra,
Kristina Pardalos, *դատավորներ,*
և Santiago Quesada, *Բաժանմունքի քարտուղար,*

2012թ. մարտի 20-ին կայացած դռնփակ նիստում, կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Գործը սկիզբ է առել 2005թ. փետրվարի 3-ին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի պրն. Արտակ Գաբրիելյանի («դիմումատու») կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության բերված թիվ 8088/05 գանգատի հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացնում էին Լոնդոնում հիմնադրված Մարդու Իրավունքների Քրդական Ծրագրի (ՄԻՔԾ) փաստաբանները՝ պրն. Մ. Մյուլլերը, պրն. Տ. Օթթին, պրն. Կ. Յիլդիզը և տկն. Լ. Քլարիդջը, ինչպես նաև Երևանում գործող փաստաբանները՝ պրն. Տ. Տեր-Եսայանը և պրն. Է. Բաբայանը: ՀՀ կառավարությունը («Կառավարություն») ներկայացնում էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն. Գ. Կոստանյանը:

3. 2008թ. սեպտեմբերի 10-ին Երրորդ Բաժանմունքի նախագահը որոշեց գանգատն ուղարկել Կառավարությանը: Որոշվեց նաև Կոնվենցիայի 29-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն իրականացնել գործի ընդունելիության և ըստ էության միաժամանակյա քննություն:

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Դիմումատուն ծնվել է 1938թ. և ապրում է Երևան քաղաքում:

Ա. Գործի նախապատմությունը

5. 2003թ. փետրվար և մարտ ամիսներին Հայաստանում նախագահական ընտրություններ էին անցկացվել: Դիմումատուն ընտրությունների ընթացքում հիմնական ընդդիմադիր թեկնածու հանդիսացող՝ Հայաստանի Ժողովրդական Կուսակցությունը (ՀԺԿ) ներկայացնող թեկնածուի վստահված անձն էր: Գործող նախագահին պարտվելուց հետո ՀԺԿ թեկնածուն բողոքարկել էր ընտրությունների արդյունքները Սահմանադրական դատարանում, որը 2003թ. ապրիլի 16-ին առաջարկել էր մեկ տարվա ընթացքում Հայաստանում անցկացնել վերընտրված Նախագահի վստահության հանրաքվե:

6. Քանի որ 2004թ. ապրիլին լրացել էր մեկ տարվա վերջնաժամկետը, վերընտրված Նախագահի լեգիտիմությունը վիճարկելու համար ընդդիմությունը քարոզարշավ էր ծավալել: 2004թ. մարտի վերջերին երկու հիմնական ընդդիմադիր խմբակցությունները (Արդարություն Դաշինքը՝ բաղկացած ինը կուսակցություններից, ներառյալ՝ ՀԺԿ և Ազգային Միաբանություն կուսակցությունը) հայտարարեցին ցույցերի շարք սկսելու իրենց մտադրության մասին՝ պահանջելով վերընտրված Նախագահի հրաժարականը:

7. Դիմումատուն պնդում է, որ 2003թ. փետրվարից մինչև իր ձերբակալման՝ 2004թ. ապրիլն ընկած ժամանակահատվածը նա իր քաղաքական գործունեության պատճառով ենթարկվել էր շարունակական հետապնդման: Մասնավորապես, ոստիկանությունը հաճախ դիմումատուին հրավիրում էր ոստիկանության բաժին առանց որևէ պատճառի և պահանջում էր, որ նա դադարեցնի իր քաղաքական գործունեությունը և ընդդիմությանն աջակցություն ցույց տալը:

8. 2004թ. մարտի 30-ին Արդարություն Դաշինքի ներկայացուցիչների դեմ Քրեական Օրենսգրքի (ՔՕ) 301 հոդվածի և 318 հոդվածի 2-րդ մասի հիմքով հարուցվել է թիվ. 62201704 քրեական գործը՝ պետական իշխանությունը բռնությամբ

զավթելուն և Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված կոչեր անելու և իշխանության ներկայացուցիչներին հրապարակայնորեն վիրավորելու փաստի առթիվ:

2. Դիմումատուի ձերբակալումը և քրեական հետապնդումը

9. 2004թ. ապրիլի 8-ին դիմումատուն Երևանում գտնվող առևտրի կենտրոնում մարդկանց թռուցիկներ էր բաժանում՝ կոչ անելով նրանց ներկա գտնվել 2004թ. ապրիլի 9-ին մայրաքաղաքում անցկացվող ցույցին: Թռուցիկները հետևյալ բովանդակությամբ էին.

«Համաերկրացիներ

Այլևս հնարավոր չէ այսպես շարունակել:

Ապրիլի 9-ին երեկոյան ժամը 4-ին Ազատության Հրապարակում տեղի կունենա մեր պայքարը, որը նպատակ ունի հաստատել Հայաստանում օրինական իշխանություն: Մեր հայրենիքի ապագան կախված է յուրաքանչյուրի մասնակցությունից:

Ազգային Միաբանություն կուսակցություն Արդարություն Դաշինք»

10. Ոստիկանության երկու սպաներ Գ.Դ.-ն և Գ.Ա.-ն կանգնեցրել են դիմումատուին և պահանջել, որ նա իրենց ուղեկցությամբ գնա ոստիկանության բաժին: Հայտնի է, որ դա տեղի է ունեցել մոտավորապես ժամը 13:00-ին:

11. Ըստ դիմումատուի, նրանք ժամանել են ոստիկանության բաժին մոտավորապես ժամը 13:30-ին, որտեղ նրան տեղավորել են միջանցքի կողքին գտնվող ապակյա պատով սպասասրահում, որտեղ նա անցկացրել է մոտ տաս ժամ: Այդ ընթացքում նա նկատել է որոշ մարդկանց, որոնք ապակյա պատի մյուս կողմից, կարծես նույնականացման համար, մատնացույց էին անում իրեն: Այս ընթացքում նա փաստաբանին դիմելու հնարավորություն չի ունեցել:

12. Հայտնի է, որ դիմումատուին տեղափոխել են դատախազություն, որտեղ ժամը 20:55-ից մինչև 21:05-ը և 21:30-ից մինչև 22:05-ը անցկացվել է երկու առերեսում՝ նրա և երկու վկաների, համապատասխանաբար, Մ.Մ.-ի և Ն.Ս.-ի միջև, որոնք աշխատում էին առևտրի կենտրոնում: Համապատասխան արձանագրությունների սկզբում նշված էր, որ գոյություն ունեին

որոշակի հակասություններ այս վկաների և դիմումատուի ցուցմունքների միջև, ով այս փուլում նույնպես ներգրավված էր որպես վկա:

13. Վկա Մ.Մ.-ն առերեսման ժամանակ պնդել է, որ ավելի վաղ՝ նույն օրը, մոտավորապես ժամը 14:00-ին նա նկատել է դիմումատուին առևտրի կենտրոնում մարդկանց թռուցիկներ բաժանելիս և ինչ-որ բան ասելիս: Այնուհետև, դիմումատուն մոտեցել է իրեն և տվել թռուցիկ, որտեղ գրված էր՝ «դրանից հետո մեկ օր անց կգա կառավարության վերջը, և կառավարությունը կփոխվի, և նրանք վերջ կտան կառավարությանը և կպատժեն նրանց»:

14. Վկա Ն.Ս.-ն պնդել է, որ դիմումատուն մոտեցել է իրեն մոտավորապես ժամը 13:00-ին և թռուցիկ է տվել, որտեղ ասվում էր, որ նա պետք է «ներկա գտնվի ցույցին, որտեղ նրանք կջախջախեն և կհաղթեն», որից հետո նա հեռացել է:

15. Դիմումատուն հերքել է, որ որևէ թռուցիկ է բաժանել կամ նման հայտարարություններ է արել:

16. Երեկոյան ժամը 10:30-ին կազմվել է ձերբակալության արձանագրություն, որտեղ նշված էր, որ ականատեսը պնդել է, որ դիմումատուն բաժանել է թռուցիկներ և կոչեր է արել պետական իշխանությունը բռնությամբ զավթելու վերաբերյալ: Դիմումատուն մեկ անգամ ևս հերքել է այդ պնդումները:

17. Նույն օրը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը բավարարեց դիմումատուի բնակարանի խուզարկության մասին քննիչի միջնորդությունը: Այս որոշման մեջ նշվել է, որ բավարար հիմքեր են եղել դիմումատուի բնակարանում բռնությամբ պետական իշխանության զավթմանը և սահմանադրական կարգի փոփոխմանը, իշխանության ներկայացուցիչներին հրապարակայնորեն վիրավորելուն ուղղված կոչեր, թռուցիկներ, ծրագրեր և նախագծեր, ինչպես նաև հրազեն, զինամթերք և գործին առնչվող այլ առարկաներ և փաստաթղթեր հայտնաբերելու համար:

18. 2004թ. ապրիլի 9-ին քննիչը հրավիրել է փաստաբան Հ.Ի.-ին դիմումատուի շահերը ներկայացնելու համար: Համապատասխան արձանագրության համաձայն՝ դիմումատուն համաձայնվել է, որ փաստաբան Հ.Ի.-ն ներկայացնի իր շահերը:

19. Նույն օրը՝ ժամը 10:30-ից մինչև 11:10-ը երկու ընթերակաների ներկայությամբ դիմումատուի բնակարանը խուզարկել են, սակայն ոչինչ չէր հայտնաբերվել:

20. Ժամը 13:05-ից մինչև 14:25-ը փաստաբան Հ.Ի.-ի ներկայությամբ դիմումատուին հարցաքննել են որպես կասկածյալ: Դիմումատուն նորից հերքել է բոլոր մեղադրանքները:

21. 2004թ. ապրիլի 10-ին թիվ. 62201704 քրեական գործի շրջանակներում ՔՕ-ի 301 հոդվածով դիմումատուին պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել: Այս որոշման մեջ նշված էր.

> «[դիմումատուն], ստանալով Ազգային միաբանություն կուսակցության [տարածքային գրասենյակից] թռուցիկներ այն մասին, որ ցույցը տեղի կունենա 2004թ. ապրիլի 9-ին ժամը 16:00-ին Ազատության հրապարակում, որի նպատակն է «ստեղծել օրինական իշխանություն Հայաստանում», բաժանել է այդ թռուցիկները քաղաքացիներին և իշխանությունը զավթելու ու սահմանադրական կարգը բռնությամբ փոխելու կոչեր է արել:
>
> 2004 ապրիլի 8-ին ժամը 13:00-ի սահմաններում ոստիկանները թռուցիկներ բաժանելու ժամանակ ձերբակալել են [դիմումատուին] և նրա մոտից առգրավվել են ընդհանուր թվով 24 թռուցիկներ:
>
> Այսպիսով, [դիմումատուն] իշխանությունը զավթելու և սահմանադրական կարգը բռնությամբ փոխելու կոչեր է արել, որը 301 հոդվածով [ՔՕ] նախատեսված հանցանք է հանդիսանում:

22. Դիմումատուն և իր փաստաբանը ստորագրել էին այդ որոշումը, որում, ի թիվս այլ հարցերի, ամրագրված էր, որ մեղադրանքի էությունը բացատրվել էր դիմումատուին: Դիմումատուն ևս մեկ անգամ տվել է իր համաձայնությունը, որպեսզի իր շահերը ներկայացնի Հ.Ի.-ն: Այնուհետև նա, իր փաստաբանի ներկայությամբ հարցաքննվել է որպես մեղադրյալ: Դիմումատուն նշել է, որ իրեն պարզ էր մեղադրանքի էությունը, սակայն հերքել էր, որ թռուցիկներ էր բաժանել կամ կոչեր էր արել առևտրի կենտրոնում:

23. Նույն օրը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը բավարարել է դիմումատուին կալանավորելու վերաբերյալ քննիչի 2004թ. ապրիլի 6-ին ներկայացրած միջնորդությունը:

24. 2004թ. ապրիլի 21-ին առերեսում է անցկացվել դիմումատուի և մեկ այլ վկայի՝ Վ.Զ.-ի միջև, ով, ամենայն հավանականությամբ, նույնպես աշխատում էր առևտրի կենտրոնում: Նա հաստատել է այն փաստը, որ դիմումատուն էր այն անձը, ով 2004թ. ապրիլի 8-ին մոտեցել էր իրեն, մեկնել թռուցիկ և ասել, որ վերջինս նշված օրը ներկա գտնվի ցույցին,

որի ընթացքում կսկսվի իշխանությունը փոխելու պայքարը, ինչպես նաև ասել է, որ իշխանությունները անօրինական են և դրանք պետք է փոխվեն: Դիմումատուն նորից հերքել է այն, որ նա տարածել էր թռուցիկներ կամ որևէ կոչ էր արել, ինչպես նաև պնդել է, որ վկա Վ.Զ.-ին ոստիկանները հարկադրել են կեղծ ցուցմունքներ տալ: Այս առերեսումն անց է կացվել փաստաբան Հ.Ի.-ի ներկայությամբ:

25. 2004թ. մայիսի 6-ին տեղի է ունեցել մեկ այլ առերեսում դիմումատուի և իրեն կալանավորող ոստիկանության աշխատակից Գ.Դ.-ի միջև, և վերջինս պնդել է, որ 2004թ. ապրիլի 8-ին՝ մոտավորապես ժամը 12:00-ին, նկատելով դիմումատուին թռուցիկներ բաժանելիս առևտրի կենտրոնում, նրանք մոտեցել են իրեն և խնդրել ցույց տալ թռուցիկները: Կարդալով թռուցիկները՝ նրանք խնդրել են դիմումատուին պարզաբանման համար գալ իրենց հետ ոստիկանության բաժին: Դիմումատուն մերժել է այս մեղադրանքները: Այս առերեսումը անց է կացվել փաստաբան Հ.Ի.-ի ներկայությամբ:

26. 2004թ. մայիսի 7-ին տեղի է ունեցել մեկ ուրիշ առերեսում դիմումատուի և իրեն կալանավորող ոստիկանության երկրորդ աշխատակցի՝ Գ.Ա.-ի միջև, ում կողմից տրված ցուցմունքը նման էր ոստիկանության սպա Գ.Դ.-ի ցուցմունքներին: Դիմումատուն պատասխանել է, որ ոստիկանության աշխատակից Գ.Ա.-ի պնդումները համապատասխանում են իրականությանը և որ ինքը չի պատմել ամբողջ ճշմարտությունը իր նախկին ցուցմունքներում: Դիմումատուն խոստովանել է, որ նա տարածել է թռուցիկներ առևտրի կենտրոնում, սակայն հերքել էր, որ որևէ բան է ասել կամ կոչ է արել իշխանությունը բռնությամբ զավթելու համար: Նա պնդել է, որ զղջում է իր արարքների համար և խնդրել է ազատ արձակել իրեն: Այս առերեսումը տեղի է ունեցել փաստաբան Հ.Ի.-ի ներկայությամբ:

27. Նույն օրը դիմումատուն, փաստաբան Հ.Ի.-ի ներկայությամբ, նորից հարցաքննվել է որպես մեղադրյալ, որի ընթացքում նա նախկինում տված ցուցմունքներին նման ցուցմունքներ է տվել և մասամբ ընդունել իր մեղքը:

28. Ավելի ուշ՝ նույն օրը, Հ.Ի.-ն միջնորդություն է ներկայացրել Գլխավոր դատախազություն դիմումատուին կալանքից ազատելու համար: Նա պնդել է, որ դիմումատուն հայտնի է, որպես լավ բնավորության տեր անձնավորություն, ունի մշտական բնակության վայր, հանդիսանում է թոշակառու և ազատ արձակվելու դեպքում չի թաքնվի կամ խոչընդոտի

վարույթին: Ավելին, նա չի ունեցել որևէ քրեական հաշվառում, իրեն մեղավոր է ճանաչել և զղջացել իր արարքների համար:

29. Հայտնի է, որ չպարզված ժամանակահատվածում երկու այլ վկաներ Օ.Վ.-ն և Ս.Կ.-ն նույնպես հարցաքննվել էին դիմումատուի գործի առնչությամբ: Վկա Օ.Վ.-ն պնդել է, որ 2004թ. ապրիլի 4-ին մի բարձրահասակ մարդ թռուցիկներ էր տարածում առևտրի կենտրոնում: Իրեն թռուցիկ տալու ժամանակ նա ասել է, որ 2004թ. ապրիլի 9-ի ցույցի ընթացքում կսկսվի պայքար՝ Հայաստանում օրինական իշխանության հաստատման նպատակով: Այնուհետև նա կոչ է արել բոլորին մասնակցել պայքարին, զավթել պետական իշխանությունը և հեղաշրջում իրականացնել: Վկա Ս.Կ.-ն պնդել է, որ 2004թ. ապրիլի 8-ին մի բարձրահասակ տարիքով մարդ առևտրի կենտրոնում իրեն թռուցիկ է տվել և կոչ արել միանալ պայքարին, հեռացնել գործող իշխանությունը, բռնությամբ զավթել այն և նոր կարգ հաստատել:

30. Դիմումատուն պնդել է (ի դեպ Կառավարությունը այդ փաստը չի վիճարկել), որ քննության ողջ ընթացքում, կալանքի տակ գտնվելու ժամանակ իր փաստաբանն իրավաբանական խորհրդատվություն տրամադրելու համար իր հետ առանձին չի հանդիպել կամ խոսել: Բացի այդ, փաստաբանը նույնիսկ չի կատարել դիմումատուի պահանջը Քրեական դատավարության օրենսգրքի օրինակ իրենտրամադրելու վերաբերյալ:

3. Դատաքննությունը

31. Չպարզված ժամանակահատվածում դիմումատուի գործը ներկայացվել է Երևանի Ավան և Նոր Նորք համայքների առաջին ատյանի դատարան, որն սկսել է դատաքննությունը 2004թ. մայիսի 31-ին: Դիմումատուն առաջին ատյանի դատարանին խնդրել է, որ իր շահերը ներկայացնի փաստաբան Հ.Ի.-ն:

32. Գործը քննող դատավորը գործի քննության սկզբից նշել է, որ վկաները պատշաճ կերպով ծանուցվել էին, սակայն նրանք չեն ներկայացել նիստին, և հարցրել է դրա առնչությամբ կողմերի կարծիքը: Դատախազը հայտարարել է, որ նրանց պետք է պարտադրել ներկայանալ դատարան: Փաստաբանը նույնպես պնդել է, որ գործի քննությունն առանց վկաների անհնար է: Դատավորը համաձայնել է նրանց հետ և հետաձգել դատական նիստը մինչև 2004թ. հունիսի 2-ը:

33. 2004թ. հունիսի 2-ին կայացած դատական նիստին ներկայացել էին չորս վկաներ Ն.Ս.-ն և Մ.Մ.-ն և ոստիկանության աշխատակիցներ Գ.Դ.-ն և Գ.Ա.-ն:

34. Վկա Ն.Ս.-ն խոստովանել է, որ նա տեսնում է դիմումատուին երկրորդ անգամ, իսկ առաջին անգամ նա տեսել է դիմումատուին 2004թ. ապրիլի 8-ին դատախազությունում: Այնուհետև նա պնդել է, որ մոտավորապես մեկ ամիս առաջ, երբ նա առևտրի կենտրոնում էր, ինչ-որ մեկը մոտեցել և իրեն թռուցիկ է տվել՝ ավելացնելով, որ «վաղը ցերեկը ժամը 13:00-ին Ազատության Հրապարակում ցույց է տեղի ունենալու»: Այդ թռուցիկները տարածող մարդը բարձրահասակ էր և ալեհեր: Նա տվել է թռուցիկը և ասել. «արի այս ժամին, մենք կջախջախենք, կոչնչացնենք և կհաղթենք»: Վկա Ն.Ս.-ն պնդել է, որ այս հայտարարություններից նա հասկացել է, որ ցուցարարներն ուզում են զավթել իշխանությունը: Դիմումատուի փաստաբանի հարցին պատասխանելով, վկա Ն.Ս.-ն պնդել է, որ նա ծանոթ չէ այդ անձի հետ և չի կարող հստակ ասել, թե արդյոք դիմումատուն է բաժանել թռուցիկները և արել այդ հայտարարությունները: Այնուամենայնիվ նա համոզված էր, որ տեսել է դիմումատուին դատախազությունում: Վկա Ն.Ս.-ն պարզաբանել է, որ դատախազությունում նա պնդել է, որ չի տեսել, թե ով էր տարածում թռուցիկները, ինչին նրանք պատասխանել են, որ դա դիմումատուն էր: Դատավորի հարցին, թե ինչու էր նա հետաքննության ընթացքում միանշանակ պնդում, որ դիմումատուն էր տարածում թռուցիկները և կատարում վերը նշված հայտարարությունները, վկա Ն.Ս.-ն պատասխանել է, որ նա այդպես էր ասում, քանի որ դատախազությունում նրան ասել են, որ դիմումատուն է տարածել թռուցիկներն առևտրի կենտրոնի տարածքում: Այնուհետև նա պնդել է, որ նա չի կարող հիշել, թե դա ով էր, բայց իրեն շրջապատող բոլոր մարդիկ ասել են, որ դիմումատուն էր, և ինքը նույնն է ասել:

35. Վկա Մ.Մ.-ն պնդել է, որ մայիս ամսվա մեջ նա առևտրի կենտրոնում էր, երբ դիմումատուն, ով տարածում էր թռուցիկներ, մոտեցել է իրեն և իշխանությունը «շրջելու» նպատակով հրավիրել է ցույցի: Այնուհետև դիմումատուն հեռացել է: Վկա Մ.Մ.-ն, այնուհետև, հաստատել է, որ թռուցիկներ տարածող անձը ինչպես և դիմումատուն, ալեհեր էր, բարձրահասակ և սպիտակ վերնաշապիկով:

36. Ոստիկանության սպա Գ.Դ.-ն պնդել է, որ նա ոստիկանության սպա Գ.Ա.-ի հետ հերթապահել է առևտրի

կենտրոնում, երբ իրենք նկատել են, որ ինչ-որ անձ թռուցիկներ է բաժանում: Իրենք մոտեցել են նրան և ուղեկցել ոստիկանության բաժին, որտեղ պարզվել է դիմումատուի ինքնությունը: Իրենք չէին կարող լսել, թե նա ինչ էր ասում վաճառողներին: Դիմումատուի փաստաբանի հարցերին պատասխանելով՝ ոստիկանության սպա Գ.Դ.-ն ասել է, որ նա անձամբ չի լսել դիմումատուի կողմից արված որևէ կոչ: Վաճառողներից որևէ մեկը նույնպես իրեն չի ասել, որ դիմումատուն կոչեր է արել:

37. Ոստիկանության սպա Գ.Ա.-ն նույնպես նմանատիպ ցուցմունքներ է տվել:

38. Այնուհետև, գործը քննող դատավորը հայտարարել է, որ ոստիկանությունից պաշտոնական գրություն է ստացել, որտեղ նշված էր, որ վկա Ս.Կ.-ն իր մշտական բնակության վայրում չէր, վկա Օ.Վ.-ն լքել է իր մշտական բնակության վայրը և ապրում է մեկ այլ տեղում, և որ դատարանի որոշումը այս վկաների ներկայանալու պահանջի մասին, որոշ մասով՝ վկա Վ.Զ.-ի առնչությամբ, չի կատարվել դատարանին անհայտ պատճառներով: Դատախազը պահանջել է, որպեսզի այդ վկաների կողմից նախաքննության ընթացքում տրված ցուցմունքները հրապարակվեն: Դիմումատուն և իր փաստաբանը տվել էին իրենց համաձայնությունը, ինչից հետո ընթերցվել էին ցուցմունքները:

39. Այնուհետև դիմումատուն հարցաքննվել է, որի ընթացքում նա ընդունել է, որ թռուցիկներ է տարածել , սակայն հերքել է իշխանության բռնությամբ զավթմանն ուղղված որևէ կոչ անելը:

40. Այնուհետև դատաքննությունը եզրափակվել է կողմերի ելույթներով: Դատախազից հետո ելույթ են ունեցել դիմումատուի պաշտպանը և դիմումատուն: Փաստաբանը, մասնավորապես, հայտարարել է. «Ես գտնում եմ, որ ամբաստանյալը պետք է արդարացվի»:

41. Նույն օրը առաջին ատյանի դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել և սահմանել մեկ տարվա պայմանական պատիժ՝ միևնույն ժամանակ կարգադրել, որ դիմումատուին ազատեն կալանքից մշտական բնակության վայրը չլքելու գրավոր պարտավորությամբ: Առաջին ատյանի դատարանը, մասնավորապես, գտել է, որ.

> «2004թ. ապրիլի 8-ին [դիմումատուն] ստացել է 2004թ. ապրիլի 9-ի ժամը 16.00-ին Ազատության Հրապարակում անցկացվող երթի մասին թռուցիկներ Ազգային Միաբանություն կուսակցության Ավան և Նոր-Նորք համայքների գրասենյակից, տարածել է դրանք առևտրի ոլորտում

> աշխատող և ընդգրկված մարդկանց շրջանակներում [Նորքում] տեղակայված յոթերորդ առևտրի կենտրոնի տարածքում, ինչպես նաև հրապարակային կոչեր է արել՝ ուղղված իշխանությունը և սահմանադրական կարգը բռնությամբ տապալելուն: Մասնավորապես, թռուցիկները [Ն.Ս.-ին, Մ.Մ.-ին, Վ.Զ.-ին, Օ.Վ.-ին և Ս.Կ.-ին] տարածելու ընթացքում նա դրդել է իրենց մասնակցել երթին, ասելով. «Դուք պետք է ամեն գնով ներկայանաք, մենք կջախջախենք, կզավթենք, վերջ կդնենք այս իշխանությանը և կհաղթենք իրենց, մենք հեղաշրջում կիրականացնենք, մենք բռնությամբ կզավթենք առկա իշխանությունը և նոր կարգ կհաստատենք»:

42. Առաջին ատյանի դատարանն իր դատավճիռը հիմնավորել է վկաներ Ն.Ս.-ի, Մ.Մ.-ի, Վ.Զ.-ի, Օ.Վ.-ի և Ս.Կ.-ի կողմից տրված ցուցմունքներով: Ինչ վերաբերում է, մասնավորապես, Ն.Ս.-ի կողմից դատարանում տրված ցուցմունքներին՝ առաջին ատյանի դատարանը մերժել է դրանք հավաստի չլինելու հիմքով և ընդունել իր կողմից 2004թ. ապրիլի 8-ին առերեսման ընթացքում տրված ցուցմունքները: Առաջին ատյանի դատարանը պատճառաբանել է իր այդ որոշումն այն փաստով, որ վկա Ն.Ս.-ի կողմից առերեսման ընթացքում տրված ցուցմունքները աներկիմաստ էին: Այսպիսով, համաձայն առաջին ատյանի դատարանի կողմից հիմք ընդունած վկաների ցուցմունքների ամբողջականության՝ դիմումատուն, երբ թռուցիկներ էր տարածում և, երբ մարդկանց դրդում էր ցույցին մասնակցել, հետևյալ կոչերն է արել՝ «մենք կջախջախենք և կհաղթենք» (վկա Ն.Ս.), «իշխանությունը կփոխվի և մենք վերջ կտանք իշխանությանը և կհաղթենք նրանց» (վկա Մ.Մ.), «պայքարը կսկսվի իշխանությունը փոփոխելուն և օրինական իշխանության հաստատմանն ուղղված ցույցի ժամանակ», «առկա իշխանությունը կտապալվի և նորը կհաստատվի», «առկա իշխանությունն անօրինական է և պետք է փոփոխվի» (վկա Վ.Զ.), «իշխանությունը պետք է զավթվի և պետք է հեղաշրջում կատարվի» (վկա Օ.Վ.) և «առկա իշխանությունը պետք է ոչնչացվի և բռնությամբ զավթվի, և պետք է հաստատվի նոր կարգ» (վկա Ս.Կ.):

43. 2004թ. հունիսի 14-ին դիմումատուն բողոք է բերել, որն ակհայտորեն կազմված է եղել վերջինիս կողմից: Իր բողոքի մեջ դիմումատուն պնդել է, որ քննության ընթացքում նա իրեն մեղավոր է ճանաչել միայն թռուցիկներ տարածելու մեջ, որը ցանկացած դեպքում հանցագործություն չի եղել, բայց նա իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված որևէ կոչ չի արել: Նա որևէ կուսակցության անդամ չի եղել, երբեք չի մասնակցել

որևէ ցույցի կամ չի շփվել դրանք կազմակերպող կուսակցությունների հետ: Դիմումատուն հետագայում բացատրել է, որ վկաներ Ն.Ս.-ի և Մ.Մ.-ի կողմից իր օգտին դատարանում տրված ցուցմունքները համարվել են անհավաստի, մինչդեռ մյուս վկաները, ամաչելով իրենց կեղծ ցուցմունքներից, չեն ներկայացել դատարան: Նա վիճարկել է, որ դատարանում չհարցաքննված վկաների ցուցմունքները չպետք է դրվեին իրեն դատապարտող դատավճռի հիմքում: Բողոքը եզրափակելով՝ դիմումատուն նշել է, որ իրեն ձերբակալող ոստիկանության սպաները թույլ չեն տվել որևէ կոչ անել: Այսպիսով, դիմումատուին դատապարտել են՝ հիմք ընդունելով նրան դատախազությունում առաջին անգամ տեսած երկու կամ երեք վկաների ցուցմունքները:

44. 2004թ. հունիսի 29-ին գործը քննության է առել Քրեական և զինվորական գործերով Վերաքննիչ դատարանը: Դիմումատուն Վերաքննիչ դատարանում իրեն մեղավոր չի ճանաչել և պնդել է, որ իր շահերը ներկայացնի փաստաբան Հ.Ի.-ն: Փաստաբան Հ.Ի.-ն նույնպես պնդել է, որ դիմումատուն անմեղ է և պահանջել է արդարացնել վերջինիս:

45. Դիմումատուի հարցաքննությունից հետո 2004թ. հունիսի 30-ին կայացած դատական նիստին նախագահող դատավորը հայտարարել է, որ անհրաժեշտ է դատակոչի ենթարկել և հարցաքննել վկաներ Օ.Վ.-ին, Վ.Զ.-ին և Ս.Կ.-ին: Այնուհետև նա հայտարարել է, որ նախորդ օրը զանգահարել է բոլոր երեք վկաներին: Օ.Վ.-ի կինը պատասխանել է, որ մոտավորապես մեկ ամիս առաջ Օ.Վ.-ն աշխատանքի համար մեկնել է Ռուսաստան, և նրա գտնվելու վայրը հայտնի չէ: Վ.Զ.-ի կինը պատասխանել է, որ Վ.Զ.-ն աշխատելու համար գնացել է մեկ այլ մարզ և ինքը չունի որևէ այլ տեղեկություն նրա մասին: Ս.Կ.-ի հարազատները պատասխանել են, որ Ս.Կ.-ն մեկնել է Հայաստանից աշխատելու նպատակով: Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով հետևյալ վկաների դատաքննությանը ներկա լինելու անհրաժեշտությունը, որոշեց վկաներին պարտադրել ներկայանալ դատաքննությանը: Այս խնդրի լուծումը հանձնարարվել էր վկաների բնակության վայրի ոստիկանության համապատասխան բաժնին: Դատական նիստը հետաձգվել էր մինչև 2004թ. հուլիսի 6-ը:

46. 2004թ. հուլիսի 6-ին կայացած դատական նիստին նախագահող դատավորը հայտարարել է, որ ոստիկանության հայտնած տեղեկության համաձայն՝ վկաները բացակայում էին իրենց մշտական բնակության վայրերից: Ոստիկանությունը խոստացել էր գրավոր տրամադրել լրացուցիչ տեղեկությունները:

Պատասխանելով նախագահող դատավորի հարցին՝ կողմերը չեն առարկել դատական նիստը շարունակելուն և պահանջել են միջոցներ ձեռնարկել հաջորդ դատական նիստին վկաների մասնակցությունն ապահովելու համար:

47. 2004թ. հուլիսի 7-ին տեղի ունեցած դատական նիստին նախագահող դատավորը տեղեկացրել է կողմերին, որ ոստիկանությունից պաշտոնական գրություն են ստացել, որտեղ նշված է, որ վկաներ Օ.Վ.-ն, Վ.Զ.-ն և Ս.Կ.-ն բացակայում են իրենց բնակության մշտական վայրերից: Գրությունը ընթերցելիս՝ նախագահող դատավորը նկատել է, որ ոստիկանությունը սխալ հասցեով է որոնել վկա Վ.Զ.-ին: Այնուհետև դատախազը խնդրել է ընթերցել վկաների ցուցմունքները: Փաստաբան Հ.Ի.-ն պնդել է, որ նշված վկաները հետաքննության ընթացքում դիմումատուի նկատմամբ վստահություն չներշնչող վարկաբեկիչ հայտարարություններ են արել և, այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է ոստիկանության ուղեկցությամբ նրանց ներկայացնել դատարան: Դիմումատուն միացել է իր փաստաբանի պահանջին և խնդրել, որ նշված վկաները ներկայանան դատարան իրենց անձը հաստատող փաստաթղթերով: Վերաքննիչ դատարանը գտել է, որ, քանի որ դատարանում Վ.Զ.-ի ներկայանալու կարգադրություն արձակող որոշման մեջ սխալ հասցե էր նշված, ապա անհրաժեշտ էր հայտնել ոստիկանությանն իրական հասցեն: Ինչ վերաբերում է վկաներ Օ.Վ.-ին և Ս.Կ.-ին՝ նրանցից առաջինը Ռուսաստանում էր, մինչդեռ երկրորդը բացակայել է երկրից: Այս փաստը նաև հաստատվում է նախագահող դատավորի կողմից կատարած հեռախոսային զանգերով: Վերաքննիչ դատարանը հայտարարել է, որ տվյալ հանգամանքներում չկա որևէ հիմք կասկածելու ոստիկանության կողմից տրամադրված տեղեկատվության ճշմարտացիությանը, ինչպես նաև որ այն կընթերցի և կքննի այդ վկաների մինչդատական վարույթում տրված ցուցմունքները: Այնուհետև ցուցմունքները կհետազոտվեն խորհրդակցական սենյակում և կտրվի դրանց արժանահավատ լինելու գնահատականն այնքանով, որքանով դատարանում ուսումնասիրված ապացույցները բավարար կլինեն նման գնահատական տալու համար: Այնուհետև Վերաքննիչ դատարանն ընթերցելէ նշված ցուցմունքները: Դիմումատուն պնդել է, որ նրանց ցուցմունքներն իրեն չեն վերաբերում, քանի որ առևտրի կենտրոնում կային բազմաթիվ բարձրահասակ, ալեհեր տղամարդիկ: Քննչական մարմինը դիմումատուին ճանաչման

համար երբևէ չի ներկայացրել այդ վկաներին, և այդ իսկ պատճառով, վկաների ցուցմունքները կեղծ էին:

48. 2004թ. հուլիսի 12-ին նախագահող դատավորը հայտնել է, որ պաշտոնական գրություն է ստացվել ոստիկանությունից, համաձայն որի՝ վկա Վ.Զ.-ի բնակության հասցեն ճիշտ է եղել, սակայն դռան զանգերին ոչ ոք չի պատասխանել: Նախագահող դատավորը հայտարարել է, որ, բավարար չհամարելով ոստիկանության գրությամբ հայտնած տեղեկությունը՝ նա անձամբ զանգահարել է Վ.Զ.-ի տուն և համոզվել, որ տանը մարդ չկար, քանի որ ոչ ոք չի պատասխանել հեռախոսազանգին: Դատախազը խնդրել է, որ վկա Վ.Զ.-ի ցուցմունքներն ընթերցվեն դատարանում, մինչդեռ և՛ դիմումատուն, և՛ իր փաստաբանը պնդել են, որ վկա Վ.Զ.-ի ցուցմունքները անհավաստի են և խնդրել են, որ դրանք հաշվի չառնվեն: Այնուհետև դատարանը ընթերցել է ցուցմունքը:

49. Նույն դատական նիստի ժամանակ դիմումատուն, միջնորդություն է ներկայացրել Վերաքննիչ դատարան՝ հրաժարվելով փաստաբան Հ.Ի.-ի ծառայություններից: Նա պնդել է, որ փաստաբանն իր շահերը պաշտպանելու և իր անմեղությունն ապացուցելու համար որևէ քայլ չի ձեռնարկել: Փաստաբանը երբևէ չի այցելել իրեն կալանավայրում գտնվելու ժամանակ: Ավելին, փաստաբանը, առանց իրեն տեղյակ պահելու, 2004թ. մայիսի 7-ին միջնորդություն էր ներկայացրել դատարան՝ նրան ազատ արձակելու վերաբերյալ, որտեղ փաստաբանը հայտարարել է, որ դիմումատուն իրեն մեղավոր է ճանաչել, չնայած այն փաստին, որ նա երբևէ իրեն ամբողջովին մեղավոր չի ճանաչել, դրանով իսկ փաստաբանը գործել է ի վնաս իրեն և օգնել է դատախազությանը իր դեմ մեղադրանքը հիմնավորելու գործում: Դիմումատուն պնդել է, որ այս միջնորդության մասին նա իմացել է միայն գործը վերաքննության կարգով քննության առնելու ընթացքում: Այնուհետև, իր միջնորդության մեջ նա պնդել է, որ նա իրեն մեղավոր էր ճանաչել միայն թռուցիկներ տարածելու մեջ, որովհետև նա տեղյակ չէր , որ այդպիսի գործողությունը հանցանք չէր պարունակում: Դիմումատուն գիտակցել է սա միայն կալանքից ազատվելուց հետո, քանի որ չնայած իր բազմաթիվ խնդրանքներին, կալանքի տակ գտնվելու ժամանակ ՔՕ-ի որևէ պատճեն այդպես էլ նրան չի տրամադրվել ո՛չ քննիչի կողմից, և ո՛չ էլ՝ իր փաստաբանի կողմից: Դիմումատուն, ի վերջո, պնդել է, որ իր դեմ գործը կեղծել էին: Նա հայտարարել է, որ ոստիկանության բաժնում ապակե պատից այն կողմ նստած լինելու ընթացքում

նրան ցույց են տվել որոշ մարդկանց, ովքեր հետագայում վկա են ճանաչվել և իր դեմ կեղծ ցուցմունքներ են տվել: Նրանցից ոմանց նա ի վիճակի չէր հարցաքննել և նրանցից միայն երկուսն էին հանդեսեկել դատարանի առջև: Այդ երկուսից մեկը փոխել է մինչդատական վարույթի իր ցուցմունքները, մինչդեռ երկրորդը կեղծ ցուցմունք տալու պատճառով նույնիսկ ամաչել է նայել իր աչքերի մեջ և կարողացել է միայն հազիվ արտաբերելով հաստատել մինչդատական վարույթում տրված իր ցուցմունքները:

50. Դիմումատուն միևնույն ժամանակ պնդել է, որ փաստաբանի ծառայություններից հրաժարվելն իր անձնական որոշումն է եղել: Վերաքննիչ դատարանը բավարարել է դիմումատուի միջնորդությունը և թույլ տվել դիմումատուին անձամբ պաշտպանել իր շահերը: Այնուհետև փաստաբանին խնդրել էին հեռանալ դատական նիստերի դահլիճից:

51. Նույն օրը Քրեական և զինվորական գործերով Վերաքննիչ դատարանը կայացրել է դիմումատուի դատապարտումը հաստատելու մասին որոշում: Վերաքննիչ դատարանը որոշման մեջ անդրադարձել է վկաներ Ն.Ս.-ի, Մ.Մ.-ի, Օ.Վ.-ի և Ս.Կ.-ի և ոստիկանության սպաներ Գ.Դ.-ի և Գ.Ա.-ի ցուցմունքներին: Ինչ վերաբերում է վկա Վ.Զ.-ի ցուցմունքին, Վերաքննիչ դատարանը համարել է, որ այն չպետք է դրվի դիմումատուի դատապարտման հիմքում, քանի որ չնայած դատարանի պահանջին, վկան չէր ներկայացել դատարան: Այնուհետև Վերաքննիչ դատարանը մերժել է դիմումատուի պնդումը այն մասին, որ նա միայն տարածել է թռուցիկներ և իշխանության բռնությամբ զավթելուն ուղղված որևէ կոչ չի արել: Վերաքննիչ դատարանը հայտարարել է, որ հինգ վկաներ հաստատել են, որ նա արել է նման կոչեր: Ավելին, ոստիկանության սպաները ձերբակալել են իրեն այն ժամանակ, երբ նա տարածում էր այդ թռուցիկները: Այն փաստը, որ վկաներ Օ.Վ.-ին և Ս.Կ.-ին չէր հաջողվել ներկայանալ դատարան, չէր կարող կասկածի տակ դնել դիմումատուի մեղավորությունը և ներգրավվածությունը գործողությունների մեջ, քանի որ նրա մեղավորությունը հաստատող բավարար ապացուցներ գործում արդեն առկա էին: Դիմումատուի գործողությունների մեջ հանցակազմի տարրն էր դրդումըբռնությամբ զավթել պետական իշխանությունը և սահմանադրական կարգի փոփոխմանն ուղղված կոչեր անելը: Այս կոչերը հրապարակային էին և ուղղված էին մարդկանց մեծ խմբին: Քանի որ նա արել է նման կոչեր առևտրի կենտրոնում ցերեկային ժամերի ընթացքում, դրանք լսելի

էին հանրությանը: Այն փաստը, որ դրանք ընկալվել էին որպես պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված կոչեր հաստատվում է վկաների ցուցմունքներով:

52. Վերաքննիչ դատարանը, այնուհետև, մերժել է փաստաբան Հ.Ի.-ին առնչվող դիմումատուի բողոքը, հայտարարելով, որ դիմումատուի պաշտպանության իրավունքը ապահովվել է քննչական մարմնի կողմից, նա ընտրել է իր դիրքորոշումը կապված իր դեմ ներկայացված մեղադրանքի հետ առանց որևէ արտաքին ճնշման, և նա նախկինում չի ներկայացրել որևէ բողոք փաստաբանի հետ կապված: Ավելին, այն փաստը, որ մեղադրանքի էությունը պարզ էր դիմումատուին, ակնհայտ էր քննչական միջոցառումների արձանագրություններից: Իր փաստաբանի ներկայությամբ դիմումատուն դա հաստատել է իր ստորագրությամբ:

53. 2004թ. հուլիսի 14-ին դիմումատուն վճռաբեկ բողոք է բերել, որտեղ փաստարկներ է ներկայացրել իր դեմ ցուցմունք տված վկաների և փաստաբան Հ.Ի.-ի կողմից արդյունավետ իրավական պաշտպանության տրամադրման ենթադրյալ ձախողմանվերաբերյալ: Դիմումատուն նման փաստարկներ է ներկայացրել նաև իր 2004թ. հուլիսի 12-ի բողոքում: Նա նաև ավելացրել է, որ վկաների իր դեմ տրված ցուցմունքներըկեղծվել են ոստիկանության ճնշման տակ: Վերոնշյալ վկաները, որոնք գումար էին վաստակում առևտրի կենտրոնում աշխատելով, կզրկվեին իրենց գործից, եթե չկատարեին ոստիկանության հրամանները:

54. 2004թ. օգոստոսի 6-ին Վճռաբեկ դատարանը մերժել է դիմումատուի բողոքը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ վկաներ Մ.Մ.-ն և Ն.Ս.-ն դիմումատուին մեղսագրվող ցուցմունքներ են տվել: Ինչ վերաբերում է փաստաբան ունենալու հարցին՝ դիմումատուն համաձայնել էր, որ փաստաբան Հ.Ի.-ն ներկայացնի իր շահերը և փաստաբանը, հավանաբար, այդպես էլ արել է:

55. 2004թ. նոյեմբերի 11-ի նամակով Հայաստանի իրավաբանների միության աշխատակազմի ղեկավարը ի պատասխան դիմումատուի բողոքին ՝ հայտնել է, որ փաստաբան Հ.Ի.-ն օրինական կերպով իրականացրել է դիմումատուի պաշտպանությունը և չի կատարել որևէ անօրինական գործողություն: 2004թ. մայիսի 7-ի միջնորդությունը ներկայացվել է իր և իր հարազատների պահանջով:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Քրեական օրենսգիրք (ուժի մեջ է 2003թ. օգոստոսի 1-ից)

56. ՔՕ -ի համապատասխան դրույթները սահմանում են.

Հոդված 301: Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը

«Պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն, Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը ՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձիերեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

Բ. Քրեական դատավարության օրենսգիրք (ուժի մեջ է 1999թ. հունվարի 12-ից)

57 Քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթները սահմանում են.

Հոդված 62. Կասկածյալը

«1. Կասկածյալ է այն անձը՝

1) որը ձերբակալվել է հանցանք կատարելու մեջ կասկածվելու պատճառով...»

Հոդված 63. Կասկածյալի իրավունքները և պարտականությունները

«1. Կասկածյալն ունի պաշտպանության իրավունք: Քրեական վարույթն իրականացնող մարմինը կասկածյալին հնարավորություն է ընձեռում օրենքով չարգելված բոլոր միջոցներով իրականացնելու պաշտպանության իր իրավունքը:

2. Կասկածյալը, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի...

4) ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը, ձերբակալման արձանագրությունը կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումն իրեն հայտարարելու պահից ունենալ պաշտպան, հրաժարվել պաշտպանից և պաշտպանվել ինքնուրույն

...»

Հոդված 86. Վկան

«3. Վկան պարտավոր է՝

1) ցուցմունքներ տալու, քննչական և այլ դատավարական գործողությունների կատարմանը մասնակցելու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով.

…

4. Վկայի կողմից իր պարտականությունները չկատարելն առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն:»

Հոդված 153. Բերման ենթարկելը

«1. Առանց հարգելի պատճառների կանչով չներկայանալու դեպքում … վկան … դատարանի պատճառաբանված որոշմամբ կարող են բերման ենթարկվել: Նշանակված ժամկետում կանչով ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների առկայության մասին … վկան… պարտավոր են տեղյակ պահել իրենց կանչած մարմնին:»

Հոդված 216. Առերեսում

«1. Քննիչն իրավունք ունի կատարել նախօրոք հարցաքննված երկու այն անձանց առերեսում, որոնց ցուցմունքներում էական հակասություններ կան: Քննիչը պարտավոր է կատարել առերեսում, եթե էական հակասություններ կան մեղադրյալի և մեկ այլ անձի ցուցմունքներում:

…

5. Առերեսմանը, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում, կարող են մասնակցել պաշտպանը, թարգմանիչը և հարցաքննվողի օրինական ներկայացուցիչը, որոնք նույնպես ստորագրում են արձանագրությունը:»

Հոդված 332. Չներկայացած վկայի, փորձագետի, մասնագետի բացակայությամբ գործի քննության հնարավորության մասին հարցի լուծումը

«1. Դատական քննությանը հրավիրված վկաներից որևէ մեկի… չներկայանալու դեպքում դատարանը, լսելով կողմերի կարծիքը, որոշում է կայացնում գործի քննությունը շարունակելու կամ հետաձգելու մասին: Դատական քննությունը կարող է շարունակվել, եթե նշված անձանցից որևէ մեկի չներկայանալը չի խոչընդոտի գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը:»

Հոդված 342. Վկայի ցուցմունքների հրապարակումը

«1. Հետաքննության, նախաքննության կամ նախորդ դատական քննության ընթացքում վկայի տված ցուցմունքների հրապարակումը, … թույլատրվում է, երբ վկան դատական նիստից բացակայում է այնպիսի պատճառներով, որոնք բացառում են նրա դատարան ներկայանալու հնարավորությունը, էական հակասություններ կան այդ ցուցմունքների և

դատարանում վկայի տված ցուցմունքների միջև, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:»

Հոդված 426[1]. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայող դատարանը

«1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է Վերաքննիչ դատարանը, իսկ Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ Վճռաբեկ դատարանը:»

Հոդված 426[4]. Գործերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր հանգամանքների հետևանքով

«1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում [եթե] ... Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը...»

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

58. Դիմումատուն բողոքել է, որ պետության կողմից նշանակված փաստաբանն արդյունավետ իրավաբանական ծառայություն չի մատուցել, ինչպես նաև՝ նա երբևէ առանձին չի հանդիպել իր հետ: Այնուհետև նա բողոքել է, որ վկաներին խաչաձև հարցաքննելու հնարավորություն չի ունեցել: Դիմումատուն հղում է կատարել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի (բ), (գ) և (դ) ենթակետերին:

59. Դատարանը գտնում է, որ դիմումատուի գանգատները ենթական են քննության 6-րդ հոդվածի 3-րդ կետի (գ) և (դ) ենթակետերով: Այնուհետև, Դատարանը կրկնում է, որ 6-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները պետք է դիտարկվեն որպես 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի հատուկ տարր: Այդուհանդերձ, Դատարանը քննության կառնի գործին առնչվող գանգատների երկու դրույթները միասին վերցրած (տե՛ս, ի թիվս այլ գործերի,

F.C.B. v. Italy, 28 Օգոստոսի 1991թ., § 29, Series A թիվ 208-B, և *Poitrimol v. France*, 23 Նոյեմբերի 1993թ., § 29, Series A թիվ 277-Ա), որոնք նախատեսում են.

« 1. Յուրաքանչյուր ոք, ... իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի ... դատարանի կողմից ... արդարացի դատաքննության իրավունք: ...

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

...

(գ) պաշտպանել իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալ անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա են պահանջում արդարադատության շահերը.

(դ) հարցաքննել իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալ, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները[:]»

Ա. Ընդունելիությունը

60. Դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) ենթակետի իմաստով՝ այս գանգատները ակնհայտորեն անհիմն չեն: Այնուհետև, Դատարանը նշում է, որ դրանք անընդունելի չեն որևէ այլ հիմքով: Այդ պատճառով, դրանք պետք է հայտարարվեն ընդունելի:

Բ. Գործի ըստ էության քննությունը

1. 6-րդ հոդվածի 3-րդ կետի (գ) ենթակետը՝ 6-րդ հոդվածի 1-ին կետը միասին վերցրած

(ա) Կողմերի պնդումները

(i) Դիմումատու

23 Դիմումատուն պնդել է, որ փաստաբան Հ.Ի.-ն արդյունավետ իրավաբանական օգնություն չի տրամադրել: Դիմումատուն առանձին երբևէ չի հանդիպել կամ խոսել իր փաստաբանի հետ և չի ստացել որևէ իրավաբանական խորհրդատվություն, ինչը հանգեցրել է դիմումատուի կողմից մասնակիորեն իրեն մեղավոր ճանաչելուն: Չնայած դիմումատուի

խնդրանքին՝ փաստաբանը նույնիսկ նրան չի տրամադրել Քրեական դատավարության օրենսգրքի պատճեն: Ավելին, փաստաբանը 2004թ. մայիսի 7-ին միջնորդություն է ներկայացրել դատարան, որով նա ընդունել է դիմումատուի մեղքը: Դիմումատուն պնդել է, որ նա հրաժարվել է փաստաբանի ծառայություններից, երբ տեղեկացել է այդ միջնորդության մասին: Վերջապես՝ դիմումատուն պնդել է, որ փաստաբանը նույնիսկ չի հարցաքննել բանավոր ցուցմունք տված վկաներին:

(ii) Կառավարություն

62.24 Կառավարությունը հայտնել է, որ դիմումատուին տրամադրվել է անվճար իրավաբանական օգնություն 2004թ. ապրիլի 9-ին իր սկզբնական հարցաքննության ընթացքում, և բոլոր քննչական միջոցառումները, ներառյալ՝ հարցաքննությունները, վկաների հետ առերեսումները և այլն, անցկացվել են փաստաբանի ներկայությամբ: Դիմումատուն տվել է իր համաձայնությունը, որպեսզի իր շահերը ներկայացնի այդ փաստաբանը, ինչն ևս մեկ անգամ հաստատվել է նրա կողմից 2004թ. ապրիլի 10-ին: Չկա որևէ ապացույց, որ նա հետաքննության կամ երկու դատական ատյաններում վարույթի ժամանակ դժգոհ է եղել իր փաստաբանից: Դիմումատուն փաստաբանի վարքագծին առնչվող որևէ հայտարարություն կամ բողոք երբևէ չի ներկայացրել: Եթե դիմումատուն դժգոհ էր իր փաստաբանից, նա կարող էր ցանկացած պահին հրաժարվել նրա ծառայություններից:

63. Այնուհետև, Կառավարությունը հայտնել է, որ 2004թ. մայիսի 7-ի միջնորդությունը չի վերաբերել դիմումատուի նկատմամբ մեղադրանքի առաջադրման, այլ առնչվել է միայն նրա կալանքի վերացմանը, որը, ավելին, մերժվել է քննիչի կողմից: Հետևաբար դա չէր կարող ազդել մեղադրանքի առաջադրման կամ դիմումատուի իրավունքների պաշտպանության իրականացման արդյունավետության վրա: Այն նաև որևէ դեր չի խաղացել վարույթի որևէ փուլում: Ավելին, փաստաբանը Վերաքննիչ դատարանում դիմումատուի անունից հայտարարություն էր արել, որ նա անմեղ է:

(բ) Դատարանի գնահատականը

64. Դատարանը կրկնում է, որ, չնայած միանշանակ չէ, սակայն քրեական հանցագործության կատարման մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի՝ անհրաժեշտության դեպքում

պետության կողմից նշանակված փաստաբանի կողմից արդյունավետ պաշտպանություն ստանալու իրավունքը, հանդիսանում է արդար դատաքննության առանձնահատկություններից մեկը (տե՛ս *Krombach v. France*, թիվ 29731/96, § 89, ՄԻԵԴ 2001-II): Չնայած 6-րդ հոդվածի 3-րդ կետի (գ) ենթակետով սահմանված իրավունքը՝ «պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած պաշտպանների միջոցով...», տարածվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի նկատմամբ, սակայն այն չի մասնավորեցնում այս իրավունքի կիրառման միջոցները: Այդպիսով, իրենց դատական համակարգում դրա երաշխավորման միջոցների ընտրությունը թողնված է Պայմանավորվող պետություններին, Դատարանի խնդիրն է միայն պարզել, թե արդյոք իրենց ընտրած մեթոդը համապատասխանում է արդար դատաքննության պահանջներին (տե՛ս *Sakhnovskiy v. Russia* [ՄՊ], թիվ 21272/03, § 95, 2 Նոյեմբերի 2010թ.):

65. Այդ առնչությամբ պետք է նկատել, որ Կոնվենցիան նպատակ ունի երաշխավորելու ոչ թե տեսական և թվացյալ իրավունքները, այլ՝գործնական և արդյունավետ: Սա, մասնավորապես, վերաբերվում է պաշտպանական կողմի իրավունքներին՝ հաշվի առնելով ժողովրդավարական հասարակության մեջ նշանավոր տեղ զբաղեցնող արդար դատաքննության իրավունքը, որից դրանք բխում են(տե՛ս *Airey v. Ireland*, 9 Հոկտեմբերի 1979թ., § 24, Series A թիվ 32): Դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի (գ) ենթակետում խոսվում է «օգնության»՝ այլ ոչ թե «նշանակման» մասին: Միայն փաստաբանի նշանակումը չի երաշխավորում արդյունավետ օգնություն, քանի որ իրավական օգնության ցուցաբերման նպատակով նշանակված փաստաբանը կարող է մահանալ, լրջորեն հիվանդանալ, նրան կարող են երկարատև ժամանակով խոչընդոտել կատարել իր պարտականությունները, կամ նա կարող է խուսափել իր պարտականությունները կատարելուց: Իշխանություններն իրադրության մասին տեղեկացվելու դեպքում պետք է կամ փոխարինեն նրան մեկ ուրիշով, կամ էլ ստիպեն նրան կատարելու իր պարտավորությունները (տե՛ս *Artico v. Italy*, վճիռ, 13 Մայիսի 1980թ., Series A թիվ 37, § 33):

66. Դատարանը նշում է, որ սույն գործով դիմումատուի ձերբակալման հաջորդ օրն իրավաբանական ծառայություն մատուցող փաստաբանը՝ Հ.Ի.-ն, հրավիրվել է ներկայացնելու

դիմումատուի շահերը (տե՛ս վերը նշված § 18): Հայտնի է, որ փաստաբանը ներկա է եղել դիմումատուին առնչվող բոլոր հետագա քննչական գործողություններին, ինչպիսիք են՝ հարցաքննությունները (տե՛ս վերը նշված §§ 20 և 27), մեղադրանքի ներկայացումը (տե՛ս վերը նշված §§ 21-22) և առերեսումները (տե՛ս վերը նշված §§ 24-26): Այնուամենայնիվ, փաստաբանի զուտ ներկայությունը բավարար չէ 6-րդ հոդվածի 3-րդ կետի (գ) ենթակետի պահանջները բավարարելու համար: Դատարանը մտահոգված արձանագրում է, որ վերը նշված քննչական միջոցառումներին ներկա գտնվելու ժամանակ փաստաբանը, այնուամենայնիվ, ինչպես երևում է, ցույց է տվել բացարձակ պասիվություն: Նա չի մասնակցել դիմումատուի հարցաքննություններին, բացառությամբ համապատասխան արձանագրությունները ստորագրելը, և որևէ հարց չի տվել առերեսումների ժամանակ դիմումատուի դեմ հանդես եկող վկաներին: Ավելին, հստակ չէ, թե փաստաբանը երբևէ հանդիպել է դիմումատուի հետ՝ նրա գործը քննարկելու և իրավական խորհրդատվություն տրամադրելու համար: Ի վերջո, Դատարանը չի կարող անտեսել այն փաստը, որ առաջին ատյանի դատարանում փաստաբանի վերջնական ճառը զուրկ է եղել փաստական և իրավական փաստերից (տե՛ս վերը նշված § 40), ինչպես նաև այն փաստը, որ փաստաբանը որևէ ներգրավվածություն չի ունեցել առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բողոք բերելու գործընթացում (տե՛ս վերը նշված § 43):

67. Ինչևէ, ի հավելումն վերը նշվածի՝ Դատարանը չի կարող չնկատել այն փաստը, որ դիմումատուն երբևէ չի բողոքել կամ փորձել վերը նշված իր գանգատներից որևէ մեկը այլ ցանկացած հնարավոր ձևով ներկայացնելու իշխանությունների ուշադրությանը՝ քննության և առաջին ատյանի դատարանի դատաքննության ողջ ժամանակահատվածում ընթացքում, ինչպես նաև Վերաքննիչ դատարանի վարույթի գրեթե ամբողջ ընթացքում: Դիմումատուն ոչ միայն տվել է իր համաձայնությունը, որպեսզի բոլոր վերը նշված խնդիրների առնչությամբ իր շահերը ներկայացնի փաստաբան Հ.Ի.-ն (տե՛ս վերը նշված §§ 18, 22, 31 և 44), այլ նաև երբևէ իր փաստաբանից դժգոհության որևէ նշան ցույց չի տվել մինչև Վերաքննիչ դատարանի վերջին նիստը (տե՛ս վերը նշված § 49): Առաջին ատյանի դատարանի կողմից իրեն դատապարտելու որոշման դեմ դիմումատուի բերած բողոքի մեջ նույնպես որևէ նշում չկար դրա մասին (տե՛ս վերը նշված § 43):

Ինչպես վերը նշված է, նա ի վերջո բարձրացրել է այդ հարցը Վերաքննիչ դատարանի վերջին նիստի ընթացքում, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարան ներկայացված բողոքի մեջ (տե՛ս վերը նշված § 49 և 53). Այնուամենայնիվ, ինչպես նշել է ինքը՝ դիմումատուն, դա մեծապես պայմանավորված է եղել իր փաստաբանի՝ 2004թ. մայիսի 7-ի միջնորդությունը ենթադրյալ ուշացմամբ հայտնաբերելով, որում, ըստ դիմումատուի, բովանդակվում էին իր գործին վնասող պնդումներ (տե՛ս վերը նշված § 26), այլ ոչ թե փաստաբանի որևէ այլ ձախողումներով կամ բացթողումներով: Հետևաբար, դիմումատուի կողմից նման ձգձգված լռությունը և նրա ուշացումով բողոքելու հիմնական պատճառը կարող են նրա հայտարարություններից մի մասի վստահելիության նկատմամբ կասկածի տեղիք տալ: Ցանկացած դեպքում, նույնիսկ ենթադրելով, որ դիմումատուի բոլոր հայտարարությունները համապատասխանում են իրականությանը, միևնույնն է՝ նա դեռ կարող էր փաստաբանի ձախողումների մասին հայտնել իշխանություններին, որոնց չի կարելի մեղադրել նման ձախողումների համար, եթե նրանք ժամանակին կ պատճաշ ձևով չեն տեղեկացվել այդ մասին մասին:

68. Ավելին, չնայած փաստաբանի՝ քննության ambwx5 ընթացքում պասիվությանը՝ նա, այնուամենայնիվ, 2004թ. մայիսի 7-ին դիմումատուի անունից միջնորդություն է ներկայացրել նրան ազատ արձակելու համար (տե՛ս վերը նշված § 26): Դատարանը չի կիսում դիմումատուի տեսակետը, թե փաստաբանը կանխամտածված գործել է ի վնաս իրեն՝ միջնորդության մեջ հաստատելով, որ դիմումատուն ընդունել է մեղավորությունը, քանի որ ակնհայտ է, որ փաստաբանը նպատակ ուներ դիմումատուին կալանքից ազատ արձակել: Ավելին, առաջին ատյանում վարույթի ընթացքում փաստաբանը որոշ վկաներին հարցեր է ուղղել, և ստացված պատասխաններից կարելի է մեկնաբանել, որ հարցերը տեղին են եղել, վերաբերելի և ի օգուտ դիմումատուի գործի (տե՛ս վերը նշված §§ 34 և 36): Նա Վերաքննիչ դատարանի առջև մի քանի անգամ նաև պնդել է, որ միջոցներ ձեռնարկեն դատարան չներկայացած վկաների ներկայությունը երաշխավորելու համար՝ պնդելով, որ նրանց հայտարարությունները զրպարտում են իրեն և հավաստի չեն են(տե՛ս վերը նշված §§ 46-48):

69. Վերոգրյալի հիման վրա՝ Դատարանը համարում է, որ սույն գործում առկա չեն բավարար տարրեր՝ եզրակացնելու, որ

պետության կողմից նշանակված փաստաբանը չի տրամադրել ակնհայտորեն արդյունավետ իրավաբանական օգնություն կամ, նույնիսկ եթե ենթադրվի, որ՝ չի տրամադրել, ապա իշխանությունները չեն կարող պատասխանատվություն կրել այդ ձախողման համար՝ հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները:

70. Հետևաբար տեղի չի ունեցել 6-րդ հոդվածի 3-րդ կետի (գ) ենթակետի խախտում՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ միասին վերցրած:

2. 6-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետը 6-րդ հոդվածի 1-ին կետիհետ միասին վերցրած

(ա) Կողմերի պնդումները

(i) Դիմումատու

71. Դիմումատուն հայտնել է, որ նա չի կարողացել պատշաճ կերպով հարցաքննել որոշ վկաների, մինչդեռ վկաներ Վ.Զ.-ն, Օ.Վ.-ն և Ս.Կ.-ն ընդհանրապես չեն հարցաքննվել: Դիմումատուի համար կարևոր էր այդ վկաներին հարցաքննելը, քանի որ առաջին ատյանի դատարանը, նրան դատապարտելիս, հիմնվել է այդ ցուցմունքների վրա, մինչդեռ մնացած վկաների ցուցմունքները հակասական և անհասկանալի էին և վճռորոշ չէին իր դեմ մեղադրանք ներկայացնելու համար:

72. Մասնավորապես, քանի որ թռուցիկների տարածումը չէր դիտարկվել որպես հանցանք, փաստերի հիմնական խնդիրն այն էր, թե արդյոք դիմումատուն բռնությամբ պետական իշխանությունը զավթելուն ուղղված կոչեր արել է, թե՝ ոչ: Դատարանների առջև ներկայացված միակ ապացույցն առ այն, որ դիմումատուն արել է այսպիսի կոչեր, դատարանում չներակայացած վկաներ Վ.Զ.-ի, Օ.Վ.-ի և Ս.Կ.-ի ցուցմունքներն են եղել, ինչպես նաև վկա Ն.Ս.-ի ցուցմունքները, որոնք հակասական են եղել: Վերջինիս չի հաջողվել դիմումատուին պատշաճ կերպով ճանաչել, և չնայած այն հանգամանքին, որ նա դատարանում նշել է, թե ճանաչել է դիմումատուին միայն որովհետև դրա մասին իրեն ասվել է դատախազությունում, առաջին ատյանի դատարանը միևնույնն է նախապատվությունը տվել է Ն.Ս.-ի մինչդատական վարույթում տրված ցուցմունքներին: Ինչ վերաբերվում է մնացած վկաներին, ապա վկա Մ.Մ-ն ճանաչել է դիմումատուին որպես

թռուցիկներ տարածող անձ, մինչդեռ ոստիկանության ձերբակալող սպաներ Գ.Ա-ն և Գ.Դ.-ն չեն լսել, թե ինչ է ասել դիմումատուն թռուցիկները բաժանելիս:

73. Դիմումատուն առարկել է Կառավարության պնդմանը, որ անհնար էր գտնել և ապահովել վկաներ Վ.Զ.-ի, Օ.Վ.-ի և Ս.Կ.-ի ներկայությունը և ժխտել է իրենց ցուցմունքների հրապարակման համաձայնություն տալը: Ավելին, վկաներ Վ.Զ.-ի, Օ.Վ.-ի և Ս.Կ.-ի ցուցմունքները պետք է որ ազդեին Վերաքննիչ դատարանի որոշման վրա, որովհետև նրանց ցուցմունքները միակն էին, որոնց համաձայն դիմումատուն արել է պետական իշխանության բռնությամբ զավթմանն ուղղված կոչեր: Ավելին, Վերաքննիչ դատարանը, հիմնվելով այդ ցուցմունքների վրա, որպես իր բողոքի մերժումը հիմնավորել է ապացույցների համապատասխանությամբ:

(ii) Կառավարությունը

74. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն հնարավորություն է ունեցել հարցաքննել վկաներին և՛ հետաքննության, և՛ դատական վարույթի ընթացքում: Նա չէր կարող վիճարկել վկաներ Վ.Զ.-ի, Օ.Վ.-ի և Ս.Կ.-ի ցուցմունքները, որովհետև, չնայած իշխանությունների ջանքերին, անհնար էր գտնել նրանց և բերել դատարան: Այդ իսկ պատճառով առաջին ատյանի դատարանը որոշեց հրապարակել նրանց ցուցմունքները, իսկ դիմումատուն ու իր փաստաբանը դրա վերաբերյալ տվեցին իրենց համաձայնությունը: Ավելին, այդ վկաները դիմումատուի գործով միակ վկաները չէին, և նրանց ցուցմունքները նման էին մյուս վկաների ցուցմունքներին, ում դիմումատուն հնարավորություն ուներ հարցաքննելու: Այսպիսով, նրանց ցուցմունքները չեն ունեցել վճռորոշ նշանակություն դիմումատուի մեղավորության հաստատման համար: Ավելին, Վերաքննիչ դատարանը չի հիմնվել վկաներ Վ.Զ.-ի, Օ.Վ.-ի և Ս.Կ.-ի ցուցմունքների վրա՝ գտնելով, որ դրանք չպետք է դրվեն դիմումատուի դատապարտման հիմքում, քանի որ, չնայած դատարանի պահանջին, այդ վկաները չեն ներկայացել դատարան: Կառավարությունը, ի վերջո, պնդել է, որ ներպետական դատարաններն ավելի լավ կարող են որոշել, թե արդյոք եղել են հակասություններ վկաների տված ցուցմունքներում:

(բ) Դատարանի գնահատականը

75. Դատարանը կրկնում է, որ ապացույցի ընդունելիությունը ի սկզբնե ներպետական օրենսդրության կարգավորման խնդիր է և, որպես համընդհանուր կանոն, ներպետական դատարանները պետք է գնահատական տան ներկայացված ապացույցներին: Կոնվենցիայի ներքո Դատարանի խնդիրն է ոչ թե սահմանել կանոն, որով վկաների ցուցմունքները ճիշտ կընդունվեն որպես ապացույց, այլ հստակեցնել, թե արդյոք վարույթն ամբողջությամբ, ներառյալ՝ ապացույցների ձեռք բերման գործընթացը, արդար էր (տե՛ս, այլոց շարքում, *Doorson v. the Netherlands*, 26 Մարտի 1996թ., § 67, *Reports of Judgments and Decisions* 1996-II):

76. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետը արտացոլում է այն սկզբունքը, որ մինչ մեղադրյալի դատապարտումն ներկայացված բոլոր ապացույցները պետք է պատշաճ դիտարկվեն իր ներկայությամբ հրապարակային դատաքննության ընթացքում՝ հաշվի առնելով մրցակցության սկզբունքը: Այս սկզբունքից հնարավոր է բացառություններ կատարել, սակայն այդ դեպքում չպետք է խախտվի պաշտպանության իրավունքը, որը, որպես կանոն, պահանջում է, որպեսզի մեղադրյալին ընձեռվի բավարար և պատշաճ հնարավորություն առարկություններ ներկայացնելու և հարցաքննելու իր դեմ ցուցմունք տված վկաներին, ինչպես վկայի ցուցմունք տալու ընթացքում, այնպես էլ դատավարության հետագա փուլերում (տե՛ս *Delta v. France*, 19 Դեկտեմբերի 1990թ., § 36, Series A թիվ 191-A; *Van Mechelen and Others v. the Netherlands*, 23 Ապրիլի 1997թ., § 51, *Reports of Judgments and Decisions* 1997-III; և *Lucà v. Italy*, թիվ 33354/96, § 39, ՄԻԵԴ 2001-II):

77. Վերը նշված սկզբունքից բխում են երկու պահանջներ: Առաջին, պետք է լինի հարգելի պատճառ վկայի չներկայանալու համար: Երկրորդ, երբ դատապարտումը հիմնվում է միայն կամ վճռորոշ կերպով գրավոր ցուցմունքների վրա, որոնք արել է անձն, ում մեղադրյալը չի կարողացել հարցաքննել ինքնուրույն հետաքննության կամ դատաքննության փուլում, ապա պաշտպանական կողմի իրավունքները կարող են սահմանափակվել այն չափով, որքանով չեն համապատասխանում հոդված 6-ով ամրագրված երաշխիքներին (տե՛ս *Al-Khawaja and Tahery v. the United Kingdom* [ՄՊ], թիվ 26766/05 և թիվ 22228/06, § 119, 15 Դեկտեմբերի 2011թ.):

78. Բացակայող վկայի կողմից ներկայացված ապացույցները ընդունելու համար լավ պատճառաբանման պահանջն առաջնային քննարկման խնդիր է, որը պետք է ուսումնասիրվի մինչ այդ ապացույցները միակը կամ վճռորոշը համարելը: Նույնիսկ երբ բացակայող վկայի ապացույցը միակը կամ վճռորոշը չի եղել, Դատարանը այնուամենայնիվ գտել է, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի (դ) ենթակետի խախտում, քանի որ վկային չհարցաքննելու համար լավ պատճառաբանություն չի ներկայացվել: Սա այն պատճառով է, որ որպես կանոն, վկաները պետք է տան ցուցմունքներ դատաքննության ընթացքում, և որ բոլոր ողջամիտ ջանքերը պետք է ներդրվեն նրանց ներկայությունն ապահովելու համար: Այսպիսով, եթե վկան չի ներկայանում բանավոր ցուցմունք տալու համար, ապա պարտավորվածություն կա տեղեկանալ, թե արդյոք այդ բացակայությունն արդարացված էր (նույն տեղում., § 120):

79. Սույն գործով Դատարանը նշել է, որ դիմումատուն մեղավոր էր ճանաչվել պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված կոչեր անելու համար: Այդ կոչերը հանդիսանում էին առևտրի կենտրոնում թռուցիկներ բաժանելու ընթացքում նրա կողմից ենթադրաբար մի շարք անձանց հասցեագրված ցույցին մասնակցելու իր բազմազան հայտարարությունները: Այդ անձինք, մասնավորապես Ն.Ս.-ն, Մ.Մ.-ն, Վ.Զ.-ն, Օ.Վ.-ն և Ս.Կ.-ն հանդես են եկել դիմումատուի գործով որպես վկաներ: Չնայած ոստիկանության երկու ձերբակալող սպաներ՝ Գ.Ա.-ն և Գ.Դ.-ն, նույնպես հայտարարություններ են արել, որոնք հաշվի են առնվել ներպետական դատարանների կողմից, սակայն նրանց հայտարարությունները ծառայել են բացառապես որպես հանգամանքների ապացույց, քանի որ ոստիկաններից ոչ ոք չի պնդել, որ լսել է դիմումատուի կողմից առևտրի կենտրոնում արված հայտարարությունները: Այսպիսով, դիմումատուի դեմ ամբողջ քրեական գործը հիմնված է եղել վերը նշված հինգ վկաների ցուցմունքների վրա:

80. Կառավարությունը պնդել է, որ այդ ցուցմունքներից միայն երկուսն էին, մասնավորապես՝ Ն.Ս.-ի և Մ.Մ-ի կողմից տրված ցուցմունքները փաստացի դրվել դիմումատուին դատապարտելու հիմքում, քանի որ Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը մերժել էր որպես ապացույց ընդունել Վ.Զ.-ի, Օ.Վ.-ի և Ս.Կ.-ի ցուցմունքները: Այս պնդումը, այնուամենայնիվ, հակասում է գործի նյութերին: Մինչդեռ վկա Վ.Զ.-ի հայտարարությունները,

Վերաքննիչ դատարանի կողմից, իսկապես հանվել են ապացույցների ցուցակից, ինչը չի կարելի ասել վկաներ Օ.Վ.-ի և Ս.Կ.-ի մասին: Ի հակադրումն սրան, Վերաքննիչ դատարանը դիմումատուի մեղքը ճանաչելու ընթացքում ակնհայտորեն անդրադարձել է այս ապացույցներին (տե՛ս վերը նշված § 51): Այսպիսով, դիմումատուի դատապարտումը հիմնված է եղել, *inter alia,* վկաներ Օ.Վ.-ի և Ս.Կ.-ի ցուցմուքնների վրա: Դիմումատուին, այնուամենայնիվ, չի տրվել հնարավորություն անձամբ հարցաքննելու վկային ոչ՛ մինչդատական վարույթի ժամանակ, և՛ ոչ էլ դատարանում: Որևէ դատական իշխանություն նույնպես երբևէ չի լսել այս վկաներին:

81. Դատարանը նշել է, որ վկաներ Օ.Վ.-ի և Ս.Կ.-ի չներկայանալու պատճառն իրենց ենթադրյալ բացակայությունն էր Հայաստանից: Այնուամենայնիվ, համոզիչ չէ, որ գործի հատուկ հանգամանքների դեպքում սա կհանդիսանար հարգելի պատճառ, որը կարդարացներ այդ վկաներին չհարցաքննելը և իրենց ցուցմունքները չներկայացնելը: Հատկանշական է, այն փաստը, որ եթե վկան բացակայում է երկրից, որտեղ վարույթն ընթանում է, դա ինքնին բավարար չէ 6-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետի պահանջներին բավարարելու համար, որը Պայմանավորվող պետություններից պահանջում է ձեռնարկել դրական քայլեր՝ մեղադրյալին հնարավորություն ընձեռելով հարցաքննել իր դեմ ցուցմունք տված վկաներին (տե՛ս *Sadak and Others v. Turkey*, թիվ 29900/96, 29901/96, 29902/96 և 29903/96, § 67, ՄԻԵԴ 2001-VIII): Այդպիսի միջոցառումները կազմում են Պայմանավորվող պետությունների կոմից կատարման ենթակա պարտավորությունների մաս, որը պետք է երաշխավորի 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքների արդյունավետ իրականացում (տե՛ս *Colozza v. Italy*, 12 Փետրվարի 1985թ., § 28, Series A թիվ 89):

82. Դատարանը պատրաստ է ընդունել, որ ներպետական դատարանները գործադրել են որոշակի ջանքեր՝ վկաներ Օ.Վ.-ի և Ս.Կ.-ի բացակայության պատճառների մասին տեղեկանալու և նրանց ներկայությունն ապահովելու համար: Ինչպես պարզվում է, նրանց չներկայանալուց հետո առաջին ատյանի դատարանը դիմել է ոստիկանության օգնությանը (տե՛ս վերը նշված §§ 32 և 38), մինչդեռ Վերաքննիչ դատարանը որոշել է հարկադրել նրանց ներկայանալ դատարան՝ հետաձգելով 2004թ. հունիսի 30-ի և հուլիսի 6-ի դատական նիստերը և հանձնարարելով ոստիկանությանն ապահովել նրանց ներկայությունը հաջորդ

նիստին (տե՛ս վերը նշված §§ 45 և 46): Այնուամենայնիվ, հայտնի չէ թե բացի նրանց մշտական բնակության վայրից բացակայության մասին տեղեկանալուց, ինչպիսի այլ ջանքեր էր գործադրվել ոստիկանության կողմից այդ վկաների գտնվելու վայրը պարզելու համար: Չկա որևէ ապացույց, որը կվկայեր այն մասին, արդյոք ոստիկանությունն երբևէ փորձել է գտնել նրանց բնակության նոր հասցեները կամ տեղեկանալ նրանց բացակայության մանրամասներին, ներառյալ արդյոք դա մշտական, թե ժամանակավոր բնույթ էր կրում և արդյոք Օ.Վ.-ն և Ս.Կ-ն ապագայում նպատակ ունեին այցելել կամ վերադառնալ տուն: Չնայած այդպիսի տեղեկատվության բացակայությանը, առաջին ատյանի դատարանը հրապարակեց նրանց ցուցմունքները (տե՛ս վերը նշված § 38):

83. Ճիշտ է, որ Վերաքննիչ դատարանի նախագահող դատավորը փորձել է անձամբ կապվել Օ.Վ.-ի և Ս.Կ.-ի հետ, ինչի արդյունքում պարզվել է, որ առաջինը մեկնել է Ռուսաստան, իսկ երկրորդը մեկնել է Հայաստանից (տե՛ս վերը նշված § 45): Այնուամենայնիվ, ոստիկանության նման, նա հետագայում ոչ մի ջանք չի գործադրել վկաների գտնվելու վայրը պարզելու համար: Օ.Վ.-ի կնոջ պատասխանն այն մասին, որ նա անտեղյակ է Օ.Վ.-ի գտնվելու վայրի մասին, ընդունվել է առանց որևէ հետագա հարցումների, վկայի գտնվելու վայրը հաստատելու համար միջազգային իրավական օգնության դիմելու ոչ մի փորձ ևս չի կատարվել: Ինչ վերաբերում է վկա Ս.Կ.-ին, ապա նախագահող դատավորը նույնիսկ հարցում չի արել նրա նոր գտնվելու վայրի մասին: Հետագա այլ հարցումներ անելու համար ժամանակ չի տրամադրվել և ցուցումներ չեն տրվել, և Վերաքննիչ դատարանն անմիջապես կարգադրել է հրապարակել վկաների ցուցմունքները 2004թ. հուլիսի 7-ին կայանալիք հաջորդ նիստի ժամանակ (տե՛ս վերը նշված § 47): Ավելին, Վերաքննիչ դատարանն այդպես է վարվել չնայած ավելի վաղ համարել էր այդ վկաների ներկայությունը «պարտադիր» (տե՛ս վերը նշված § 45):

84. Այդ իսկ պատճառով, Դատարանն եզրակացնում է, որ իշխանությունների կողմից գործադրված ջանքերն այս գործի շրջանակներում բավարար չեն կարող համարվել (այս առնչությամբ տե՛ս, *Artner v. Austria*, 28 Օգոստոսի 1992թ., § 21, Series A թիվ 242-A, որով ավստրիական ոստիկանությունը գործը քննող դատարանի կողմից կարգադրություն էր ստացել ձեռնարկել բոլոր միջոցները բացակայող վկաներին գտնելու համար. *Berisha v. the Netherlands* (որոշում), թիվ 42965/98, 4

Մայիսի 2000թ., որով հոլանդական իշխանությունները փորձել են զանգահարել Սլովակիայի Հանրապետությունում գտնվող վկային սլովակ իշխանությունների միջոցով. և *Haas v. Germany* (որոշում), թիվ 73047/01, 17 Նոյեմբերի 2005թ., որով գերմանական իշխանություններրը ձեռնարկել են զգալի միջոցառումներ Լիբանանի բանտում պատիժը կրող վկայի ներկայությունն ապահովելու համար): Այսպիսով, չի կարելի պնդել, որ առկա էին հարգելի պատճառներ վկաներ Օ.Վ.-ին և Ս.Կ.-ին չհարցաքննելու համար, կամ որ ներպետական իշխանություններն իրականացրել են իրենց պարտականությունը՝ ճշտելու արդյոք նրանց բացակայությունն արդարացված էր:

85. Ճիշտ է, որ դիմումատուն առաջին ատյանի դատարանում համաձայվնել է, որ Օ.Վ.-ի և Ս.Կ.-ի մինչդատական ցուցմունքները հրապարակվեն (տե՛ս վերը նշված § 38): Սա, այնուամենայնիվ, բավարար չէ, որպեսզի դատարանն եզրակացնի, որ նա դրանով հրաժարվել է վկային հարցաքննելու իր իրավունքն իրականացնելուց: Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքն իրականացնելուց հրաժարվելն այնքանով, որքանով այդպիսի հրաժարումը թույլատրված է ներպետական օրենսդրությամբ, պետք է միանշանակորեն հաստատված լինի (տե՛ս *Colozza*, վերը նշված § 28): Դատարանը նշում է, որ դիմումատուն բողոքարկել է ինչպես Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանում, այնպես էլ ՀՀ վճռաբեկ դատարանում, որ նա չի կարողացել հարցաքննել վկաներ Օ.Վ.-ին և Ս.Կ.-ին (տե՛ս վերը նշված § 43 և 53): Այնուհետև, նա ուղղակիորեն խնդրել է Վերաքննիչ դատարանում, որպեսզի այդ վկաները ներկայանան դատարան՝ պնդելով, որ նրանց ցուցմունքներն արժանահավատ չեն (տե՛ս վերը նշված § 47): Այն փաստը, որ Վերաքննիչ դատարանը փորձել է ձեռնարկել, չնայած և անհաջող, նրանց ներկայությունն ապահովելու համար, նույնպես ենթադրում է, որ դիմումատուն չէր պատրաստվում հրաժարվել նրանց հարցաքննելու իր իրավունքի իրականացումից (տե՛ս վերը նշված §§ 45-48):

86. Վերը նշված դիտարկումները բավարար են Դատարանին միանշանակ եզրակացնելու, որ դատապարտման հարցը լուծելիս առանց հիմնավորման սահմանափակվել է դիմումատուի՝ վճռորոշ դեր ունեցող վկաներին հարցաքննելու իրավունքը: Նա չէր կարող նրանց արժանահավատ լինելու հանգամանքը ենթարկել մանրակրկիտ ստուգման կամ կասկածի տակ դնել նրանց գրավոր ցուցմունքները: Սա, հատկապես, անհանգստացնող է, հաշվի

առնելով, որ նշված վկաներն անձամբ ծանոթ չեն եղել դիմումատուին և վարույթի ոչ մի փուլում երբևէ նրանցից չի պահանջվել ճանաչել դիմումատուին:

87. Համապատասխանաբար, առկա է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետի խախտում՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ միասին վերցրած:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

88. Դիմումատուն բողոք է ներկայացրել իր խոսքի ազատության իրավունքի խախտման առնչությամբ: Նա հիմնվել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի վրա, որտեղ ամրագրված է.

> «1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունն առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից:...
>
> 2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:»

Ա. Ընդունելիությունը

1. Կողմերի պնդումները

(ա) Կառավարություն

89. Կառավարությունը հայտնել է, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները, քանի որ ներպետական մակարդակով նա չի բարձրացրել 10-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների ենթադրյալ խախտման հարցը: Նա, պարզապես, մերժել է այն փաստերը, որոնց վրա հիմնված է

եղել իր դեմ ներկայացված մեղադրանքը, մասնավորապես, այն որ նա հրապարակային կոչեր է արել՝ դրդելով պետական իշխանության բռնությամբ զավթմանը, և դա բավարար չէ սպառման նպատակների համար: Ավելին, խոսքի ազատության խախտման որևէ խնդիր չէր կարող ծագել, եթե, ինչպես պնդել է դիմումատուն, որևէ խոսք, որպես այդպիսին, չէր ասվել:

(բ) Դիմումատու

90. Դիմումատուն պնդել է, որ իր կողմից մեղադրանքի հիմքում ընկած փաստերի հերքումը բավարար է սպառման նպատակների համար: Առաջին հերթին, դատական վարույթը Պետության՝ կողմից իր խոսքի ազատության խախտմանն ուղղված գործողություններից մեկն էր, մյուսներն էին ոստիկանության պարբերական ոտնձգությունները և իր տանն անցկացված խուզարկությունը: Իր դեմ ներկայացված քրեական մեղադրանքը նպատակ ուներ կանխել դիմումատուի կողմից քաղաքական գործունեության իրականացման շարունակությունը: Երկրորդ հերթին, նա իսկապես հերքել էր պետական իշխանության բռնությամբ զավթմանն ուղղված որևէ հանրային կոչ անելը, սակայն հերքումը կարևոր չէր, քանի որ նա միևնույնն է դատապարտվել էր: Նա, այսպիսով, զրկվել էր արդյունավետ իրավական պաշտպանության միջոցից:

91. Դիմումատուն որպես այլընտրանք առարկել է, որ իր դատապարտումը հիմնված էր իր կողմից ընդունած փաստերի, մասնավորապես, թռուցիկների տարածման վրա: Նա բողոքարկել է իրեն մեղավոր ճանաչելը և դրանով իսկ սպառել է իրավական պաշտպանության ներպետական միջոցները:

2. Դատարանի գնահատականը

92. Դատարանը կրկնում է, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման կանոնը, համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի, պարտավորեցնում է նրանց, ովքեր ցանկանում են միջազգային դատական մարմնի առջև Պետության դեմ գործ ներկայացնել, սկզբից օգտագործել ներպետական իրավական համակարգով երաշխավորված իրավական պաշտպանության միջոցները, այդպիսով ազատելով Պետություններին պատասխանել միջազգային մարմնի առջև իրենց գործողությունների համար, քանի դեռ նրանք չեն ունեցել հնարավորություն լուծել հարցն իրենց իրավական համակարգում:

Սույն կանոնին համապատասխանելու նպատակով՝ դիմումատուն պետք է սպառի մատչելի և բավարար իրավական պաշտպանության միջոցները ենթադրյալ խախտումները վերականգնելու համար (տե՛ս, այլոց շարքում, *Assenov and Others v. Bulgaria* թիվ 24760/94, § 85, ՄԻԵԴ 1999-VIII):

93. Մինչդեռ մարդու իրավունքների պաշտպանության կառուցվածքի համատեքստում իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման կանոնը պետք է կիրառվի ըստ որոշ աստիճանի ճկունության և առանց ավելորդ ձևականության: Այս կանոնը չի ենթադրում միայն բողոքների ներկայացում համապատասխան ներպետական դատարաններ, այլ պետք է օգտվել այն իրավական պաշտպանության միջոցներից, որոնք նախատեսված են վերանայել այն վիճարկված որոշումները, որոնք ենթադրաբար խախտել են Կոնվենցիայով սահմանված իրավունքը: Այս կանոնը պահանջում է նաև, որ միջազգային մակարդակով բարձրացրած հարցերը ներկայացվեն համապատասխանաբար ըստ էության և ֆորմալ պահանջներին և ներպետական իրավունքով սահմանված ժամկետներին համապատասխան տվյալ ներպետական դատարաններում (տե՛ս, այլոց շարքում, *Azinas v. Cyprus* [ՄՊ], թիվ 56679/00, § 38, ՄԻԵԴ 2004-III):

94. Իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման կանոնի իմաստն է ներպետական իշխանություններին (առաջին հերթին՝ դատական իշխանություններին) թույլ տալ Կոնվենցիայով նախատեսված իրավունքի ենթադրյալ խախտումը քննության առնելը և խախտման առկայության դեպքում իրավունքը վերականգնելը մինչև գործ Դատարան ներկայացնելը: Քանի որ գոյություն ունի ներպետական մակարդակում իրավական պաշտպանության միջոց, որը հնարավորություն է տալիս ներպետական դատարաններին առնվազն ըստ էության քննության առնել Կոնվենցիայով նախատեսված իրավունքի խախտման վերաբերյալ պնդումը, ապա հենց այդ միջոցը պետք է օգտագործվի: Եթե Դատարանին ներկայացված գանգատը մինչ այդ ներպետական դատարանների կողմից ուղղակիորեն կամ ըստ էության քննության չի առնվել, որը դիմումատուի համար պետք է հանդիսանար մատչելի իրավական պաշտպանության ներպետական միջոց, ապա ներպետական իրավական համակարգը զրկվել է Կոնվենցիայի հետ կապված հարցին անդրադառնալուց, ինչի հնարավորությունը իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման կանոնը

միտված է տալ վերջինիս: Բավարար չէ, որ դիմումատուն կարող էր անարդյունավետ օգտվեր մեկ այլ իրավական պաշտպանության միջոցից, որը կարող էր չեղյալ համարել վիճարկված դրույթը Կոնվենցիայի խախտման գանգատի հետ չկապված հիմքերով: Կոնվենցիային վերաբերող գանգատն է, որ պետք է բարձրացվի ներպետական մակարդակում՝ «արդյունավետ իրավական պաշտպանության միջոցների» սպառում համարվելու համար: Այլապես դա կհակասեր Կոնվենցիայի մեխանիզմի օժանդակ բնույթին, եթե դիմումատուն՝ անտեսելով Կոնվենցիայի հետ կապված հնարավոր քննության առարկան, կարողանար մեկ ուրիշ հիմքով դիմել դատարան՝ վիճարկվող նորմը քննության առնելու համար, իսկ հետո գանգատ ներկայացներ Դատարան՝ Կոնվենցիայի հետ կապված հարցի քննության համար (նույն տեղում):

95. Սույն գործի փաստական հանգամանքներին անդրադառնալով՝ Դատարանը ևս մեկ անգամ նշում է, որ դիմումատուն մեղադրվել և դատապարտվել է պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված հրապարակային կոչեր անելու համար: Դիմումատուն երբևէ չի բողոքել որևէ ներպետական դատական ատյանի առջև, որ այդ հիմքով իր մեղադրումն ու դատապարտումը խախտում է իր խոսքի ազատության իրավունքը (տե՛ս վերը նշված §§ 39, 43 և 53): Ավելին, նա նույնիսկ չի ներկայացրել նման բողոքներ որպես այլընտրանք, այլ միայն պնդել է բոլոր ատյաններում, որ նա երբեք չի արել այդպիսի հրապարակային կոչեր: Ինչ վերաբերում է թռուցիկների տարածմանը՝ Դատարանը համաձայն չէ դիմումատուի հետ, որ այդ գործողությունն ինքնին ընկած է եղել իր դատապարտման հիմքում: Ավելին, այսպիսի հայտարարություններ անելով՝ դիմումատուն հակասում է իր իսկ պնդումներին 6-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետի առնչությամբ (տե՛ս վերը նշված § 72): Ցանկացած դեպքում, նույնիսկ ենթադրելով, որ թռուցիկների տարածումը հանդիսացել է դիմումատուի դատապարտման հիմքը՝ դիմումատուն, միևնույնն է, այդ հիմքով նույնպես ներպետական դատարանների առջև չի բողոքարկել խոսքի ազատության իր իրավունքը: Այսպիսով, դիմումատուն, ըստ էության, չի բարձրացրել ներպետական դատարանների առջև գանգատը, որը նա ներկայացրել է Դատարան:

96. Հետևաբար, դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները, և դիմումն այս

մասով ենթակա է մերժման՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերին համապատասխան:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԱՅԼ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

97. Դիմումատուն ներկայացրել է մի շարք այլ գանգատներ Կոնվենցիայի 3–րդ հոդվածով, 5-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով, 8-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով, ինչպես նաև՝ Թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածով:

98. Հաշվի առնելով իր մոտ առկա բոլոր նյութերը, այնքանով, որքանով այս գանգատներն ընկնում են իր իրավասության ներքո՝ Դատարանը գտնում է, որ չի բացահայտվել Կոնվենցիայում կամ դրան կից Արձանագրություններում ամրագրված իրավունքների և ազատությունների որևէ այլ խախտում: Հետևաբար, համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի, դիմումի այս մասը պետք է մերժվի որպես ակնհայտորեն անհիմն:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

99. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է.

> «Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնաս

100. Դիմումատուն պահանջել է 303,800 ՀՀ դրամ՝ որպես նյութական վնասի փոխհատուցում, որը ներառում է բաց թողնված օգուտը և բժշկական օգնության և սննդի ծանրոցների ծախսերը, որոնք արվել են իր մինչդատական կալանավորման ընթացքում: Դիմումատուն նաև պահանջել է 15,000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

101. Կառավարությունը հայտնել է, որ դիմումատուի պահանջը նյութական վնասի փոխհատուցման համար պատշաճ չի հիմնավորվել, և ենթադրյալ խախտումների հետ դրանց պատճառահետևանքային կապը բացակայում է: Այնուհետև,

Կառավարությունը խնդրել է մերժել դիմումատուի գանգատը ոչ նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ:

102. Դատարանը չի տեսնում որևէ պատճառահետևանքային կապ ընդունված խախտման և նյութական վնասի փոխհատուցման միջև, հետևաբար՝ Դատարանը մերժում է այդ պահանջը: Մյուս կողմից, Դատարանը շնորհում է դիմումատուին 2,500 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

103. Մյուս կողմից, Դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ վճիռը, որով հաստատվում է Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իրավական պարտավորություն է դնում պատասխանող Պետության վրա ոչ միայն վճարել շահագրգիռ անձանց արդարացի փոխհատուցման ձևով շնորհված գումարները, այլ նաև ընտրել ներպետական մակարդակում ընդունելի ընդհանուր և/կամ անհատական այնպիսի միջոցներ, որոնք վերջ կդնեն Դատարանի կողմից ճանաչված խախտմանը և կնպաստեն բոլոր հետևանքների հավանական հատուցման այնպես, որ հնարավոր չափով վերականգնվի մինչ խախտումը առկա իրավիճակը (տե՛ս *Scozzari and Giunta v. Italy* [ՄՊ], թիվ 39221/98 և 41963/98, § 249, ՄԻԵԴ 2000-VIII, *Ilaşcu and Others v. Moldova and Russia* [ՄՊ], թիվ 48787/99, § 487, ՄԻԵԴ 2004-VII, և *Lungoci v. Romania*, թիվ 62710/00, § 55, 26 Հունվարի 2006թ.): Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում ճանաչելու դեպքում դիմումատուն որքան հնարավոր է պետք է գտնվի այն իրավիճակում, որում նա կլիներ, եթե սույն դրույթ պահանջները չանտեսվեին: (տե՛ս, *mutatis mutandis, Sejdovic v. Italy* [ՄՊ], թիվ 56581/00, § 127, ՄԻԵԴ 2006-..., և *Yanakiev v. Bulgaria*, թիվ 40476/98, § 89, 10 Օգոստոսի 2006թ.):

104. Այս առնչությամբ Դատարանը նշում է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ և 426.4-րդ հոդվածները թույլ են տալիս ներպետական վարույթի վերաբացում, եթե Դատարանը հայտնաբերի Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում (տե՛ս վերը նշված § 57): Դատարանը ցանկացած դեպքում այն կարծիքին է, որ այն դեպքում, երբ դատաքննությունն իրականացվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի խախտմամբ, փոխհատուցման ամենապատշաճ ձևը կլինի վարույթի վերաբացումն ու գործի նորից քննումը արդար դատաքննության բոլոր պահանջներին համապատասխան (տե՛ս, *mutatis mutandis, Lungoci,* վերը ցիտած, § 56):

Բ. Ծախսեր և ծախքեր

105. Դիմումատուն նաև պահանջել է 2,700 ԱՄՆ դոլլար և 5,932.45 ֆունտ ստեռլինգ Դատական ծախսերի և ծախքերի հատուցման համար: Ի հիմնավորում իր պահանջի՝ դիմումատուն, սկսած ժամավճարից, ներկայացրել է մանրամասն ժամանակացույց:

106. Կառավարությունը հայտնել է, որ ներպետական և արտերկրյա փաստաբանների առնչությամբ պահանջները պատշաճ հիմնավորված չեն փաստաթղթային ապացույցներով, քանի որ դիմումատուն չի ներկայացրել որևէ հաշիվ, պայմանագիր կամ ցանկացած այլ փաստաթուղթ: Ավելին, դիմումատուն օգտվել է չափազանց մեծ թվով փաստաբանների ծառայություններից, չնայած այն հանգամանքի, որ գործն այնքան էլ բարդ չէր նման անհրաժեշտությունն արդարացնելու համար:

107. Համաձայն Դատարանի նախադեպային իրավունքի դիմումատուի դատական ծախսերը և ծախքերը հատուցվում են միայն այն դեպքում, երբ ապացուցվում է, որ դրանք իրականում կատարվել են, եղել են անհրաժեշտ և իրենց ծավալով ողջամիտ: Սույն գործով Դատարանը նշում է, որ ՔՄԻԾ փաստաբաններից ոչ մեկի առնչությամբ փաստաբանի որևէ լիազորագիր երբևէ չի տրամադրվել, ինչի հետևանքով էլ մերժում է համապատասխան պահանջները: Այնուհետև, Դատարանը կրկնում է, որ իրավաբանական ծախսերը ենթակա են հատուցման այն ծավալով, որքանով դրանք կապված են ճանաչված խախտման հետ (տե՛ս *Beyeler v. Italy* [ՄՊ], թիվ 33202/96, § 27, ՄԻԵԴ 2000-I): Դատարանը նշում է, որ սույն գործով, վերջին հաշվով, ճանաչվել է միայն 6-րդ հոդվածի խախտում, մինչդեռ գրավոր միջնորդությունների ամբողջությունը, ներառյալ՝ նախնական դիմումը և դրան հաջորդող դիրքորոշումները, վերաբերում էին Կոնվենցիայի մի շարք հոդվածներին և Թիվ 1 Արձանագրությանը: Այդ իսկ պատճառով, պահանջը չի կարող ամբողջովին բավարարվել, և պետք է կիրառվի զգալի նվազեցում: Տալով իր գնահատականը ՝ Դատարանը շնորհում է դիմումատուին 1,600 եվրո՝ որպես ծախսերի և ծախքերի փոխհատուցում, որը պետք է վճարվի ֆունտ ստեռլինգով Միացյալ Թագավորության իր ներկայացուցչի բանկային հաշվին:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

108. Դատարանը նպատակահարմար է համարում, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխառության տրամադրման առավելագույն տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոս:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ, ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

1. *Հայտարարում է* գանգատը՝ կապված դիմումատուի արդյունավետ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի և իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու իր իրավունքի ենթադրյալ խախտման հետ, ընդունելի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով՝ 6-րդ հոդվածի 3-րդ կետի (գ) և (դ) ենթակետերի հետ միասին վերցրած, և անընդունելի՝ գանգատի մնացած մասով.

2. *Վճռում է,* որ չկա Կոնենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ 6-րդ հոդվածի 3-րդ կետի (գ) ենթակետի հետ միասին վերցված՝ հաշվի առնելով դիմումատուին իրավաբանական ծառայություն մատուցող փաստաբանի կողմից արդյունավետ իրավական օգնության ապահովման ենթադրյալ ձախողումը.

3. *Վճռում է,* որ առկա է Կոնենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ 6-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետի հետ միասին վերցված ՝ դիմումատուի կողմից իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու հնարավորություն չունենալու առնչությամբ.

4. *Վճռում է*

(ա) պատասխանող Պետությունը, վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում, դիմումատուին պետք է վճարի հետևյալ գումարները.

(i) 2,500 (երկու հազար հինգ հարյուր) եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում՝ գումարած նշված գումարին հաշվարկվող բոլոր տեսակի հարկերը.

(ii) 1,600 (հազար վեց հարյուր) եվրո՝ գումարած նշված գումարին հաշվարկվող բոլոր տեսակի հարկերը՝ որպես ծախսերի և ծախքերի փոխհատուցում՝ փոխարկված ֆունտ ստեռլինգի վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով, որը պետք է փոխանցվի Միացյալ Թագավորության իրենց ներկայացուցիչների բանկային հաշվին.

(բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարման օրը պետք է վճարվի նշված գումարի պարզ տոկոս՝ Եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխառության տրամադրման առավելագույն տոկոսադրույքի չափով, պարտավորությունների չկատարման ժամանակահատվածի համար՝ գումարած երեք տոկոս.

5. *Մերժում է* դիմումատուի արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերեն, գրավոր ծանուցվել է 2012թ. ապրիլի 10-ին՝ համաձայն Դատարանի Կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի:

Santiago Quesada
Քարտուղար

Josep Casadevall
Նախագահ